Մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի «Զոլաքար գյուղի Ալվարդ Վարդանյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի «Երգ-երաժշտություն» առարկայի (4 դասաժամ), «Ինֆորմատիկա» առարկայի (13 դասաժամ), «Հայ եկեղեցու պատմություն» առարկայի (8 դասաժամ), «Ֆիզկուլտուրա» առարկայի (22 դասաժամ), «Կերպարվեստ» առարկայի (10 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլը անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը, և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1) դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3Х4 չափսի,
2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
3) անձը հաստատող փաստաթուղթ,
4) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
5) ինքնակենսագրություն (Ձև 5),
6) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ, ինչից հետո բնօրինակները վերադարձնում է մասնակցին:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել թերությունները և համալրել անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:

Փաստաթղթերն ընդունվում են 2023 թվականի դեկտեմբերի 26-ից մինչև 2024 թվականի հունվարի 10-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից 15:00-ն, բացի շաբաթ կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2024 թվականի հունվարի 15-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Գեղարքունիքի մարզի Զոլաքար գյուղի Ալվարդ Վարդանյանի անվան №2 միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Զոլաքար 2-րդ փողոց 33-րդ շենք:

Տեղեկությունների համար զանգահարել 091 822 992 հեռախոսահամարով: